

«Հորիզոն»ի լուսանկարիչ Իշխան Ղազարեան գնահատագրի արժանացաւ



Կարդալ էջ 5:

«Հորիզոն» հարցազրոյց ունեցաւ Գանատայի խորհրդարանի անդամ Ժան Եիբի հետ



Կարդալ էջ 5:

Համացանցի վրայ հետեւեցէք «Հորիզոն»ի ամէնօրեայ լուրերուն

www.horizonweekly.ca

CONNECT WITH US:

- facebook.com/pages/horizonweekly
- @horizonweekly
- horizonweekly
- YouTube – Horizon Weekly TV

Գանատա-Հայաստան խորհրդարանական բարեկամութեան խմբակցութեան հանդիպում



Նոյեմբեր 6-ին Օթթաուայի մէջ կայացաւ Գանատա-Հայաստան խորհրդարանական բարեկամութեան խմբակցութեան նիստը, որուն ներկայ գտնուեցան Գանատայի խորհրդարանի քաղաքական տարբեր կուսակցութիւններու ներկայացուցիչներ, Գանատայի Հայ Դատի յանձնախումբի պատուիրակուիները եւ Հայաստանի Հանրապետութեան դեսպանատան Հիւպատոս Արա Մկրտչեան: Հաւաքի ընթացքին խմբակցութեան նախագահ Պրայըն Մէյ զեկուեց Գանատայի վարչապետ Թրուտոյի Հայաստան այցելութեան մասին եւ ներկայացուց խմբակցութեան մօտակալ ծրագիրները:

Դամասկոսի մէջ տեղի ունեցաւ «Լեռնային Ղարաբաղի հարցը. Արիւնահոսող վերքը» գիրքին շնորհահանդէսը

Սուրիական Սանա Լրատուական գործակալութեան լրագրող Պիլալ Ահմատ կը յայտնէ, թէ Դամասկոսի Ալ Ասատ ազգային գրադարանին մէջ տեղի ունեցած է Սուրիոյ մօտ Հայաստանի դեսպան Արշակ Փոլատեանի վերջերս հրատարակուած «Լեռնային Ղարաբաղի հարցը. Արիւնահոսող վերքը» արաբերէն գիրքին շնորհահանդէսը:

Շնորհահանդէսին ընթացքին ցուցադրուած է Արցախի տարածաշրջանի պատմական փուլերուն, հակամարտութեան հանգրուաններուն, ինչպէս նաեւ ազատագրման ի խնդիր հայ ժողովուրդին մղած պայքարին մասին վաւերագրական տեսերիզ:

Դեսպան Փոլատեան իր խօսքին մէջ յայտնած է, թէ Ղարաբաղի հարցը արդարադատութեան հարց է եւ ունի մարդկային իրաւանց բնոյթ, որովհետեւ այն հարցն է ժողովուրդի մը, որուն իրաւունքները խլուած են այլ իշխանութիւններու կողմէ՝ թրքական կառավարութեան աջակցութեամբ, որ կը միտի տարածաշրջանի պատմութիւնը աղաւաղել եւ հերքել Արցախի պատկանելիութիւնը Հայաստանի:

«Տար Ալ Շարք» հրատարակչատան տնօրէն Նապիլ Թաամէ խօսք առնելով ընդգծած է պայքարի հանգիստութիւնը սուրիացի եւ հայ երկու ժողովուրդներուն՝ թրքական բռնատիրութենէն ձերբազատուելու ի խնդիր:

Սուրիա-Հայաստան խորհրդարանական Բարեկամութեան խմբակցութեան նախագահ, Սուրիոյ խորհրդարանի անդամ դոկտ. Նորա Արիսեան ներկայացուց գիրքն ու անոր բաժանմունքները, որոնց մէջ հեղինակը կ'անդրադառնայ տարածաշրջանի պատմականին, շրջանի ժողովրդագրութիւնը փոխելու թուրքերու ջանքերուն եւ հայերու հանդէպ անոնց խտրականութեան քաղաքականութեան, Օսմանեան կառավարութեան իրագործած ցեղասպանութեան, Արցախի կարգավիճակին մասին՝ խորհրդային միութեան շրջանին եւ զայն Ատրպէյճանի կցելու ջանքերուն, ինչպէս նաեւ անկախութեան ձեռքբերման ի խնդիր տարուած բանակցութիւններուն:

2018 PILOT MSRP STARTING FROM \$40,390*

HONDA GABRIEL

7000, boulevard Henri-Bourassa E.
Montréal-Nord, QC H1G 6C4
514 327-7777
www.hondagabriel.com

Kevoak Asadourian
Vahan Vartanian
Haig Khobassarian

HONDA

Les saveurs
de l'automne !
chez



MARCHÉ

ADONIS

The flavors of Autumn

Ste-Catherine - Griffintown - Anjou - Sauvé - Place Vertu- DDO - Brossard - Laval - Laval Est - Gatineau
Scarborough - Mississauga

www.groupeadonis.ca /   

Դեկտեմբերին տեղի պիտի ունենայ ՀՕՄ-ի Տոհմիկ օրերու 25-ամեակի տօնախմբութիւնը

Հայ Օգնութեան Միութեան Թո-րոնթոյի «Թուրինա» մասնաճիւղը իր բարեսիրական առաքելութեան կողքին կը պահպանէ ու կը տարածէ Հայ ազգի պատմութիւնն ու մշակոյթը՝ կազմակերպելով Տոհմիկ օրերու տօնակատարութիւնները: 25 տարիներ առաջ, 1994-ին, առաջին Տոհմիկ օրը նուիրուած էր Տիգրանակերտ քաղաքին եւ յաջորդաբար յիշատակուեցան Ուրֆան, Վան-Վասպուրականը, Տարսն-Տուրուքերանը, Այնթապը, Մուսա Լեռը, Մարաշ-Գերմանիկը, Խարբերդը, Քեսապը, Սիսը եւ Ատանան, Նոր Ջուղան, Քիլիսը, Կարին-Էրզրումը, Պոլիսը, Սեբաստիան, Կեսարիան եւ շրջակայքը, Երեւան-Էրեբունին, Արցախը, Զաւաթը եւ Թիֆլիսը, Զէյթունը եւ Հաճընը, Տրապիզոնը եւ Համազէնը: Եւ այսպէս ամէն տարի ներկայացնելով այդ շրջաններուն պատմութիւնը, մշակոյթը եւ Հայ ժողովուրդին կենցաղը: Յեղասպանութեան 100-ամեակին առթիւ, 2015-ին, նշուեցաւ ամբողջ Արեւմտեան Հայաստանը, որմէ ետք Տոհմիկ օրերը յաջորդաբար նուիրուեցան Հայ ազգի հերոսամարտներուն եւ Նախիջեւանին:

Այս տարի, Տոհմիկ օրերու ձեռնարկութեան 25-ամեակին եւ Հայոց պետականութեան վերականգնման 100-ամեակին առթիւ, Տոհմիկ օրը նուիրուած է մեր ազգի պետականութեան հիմքը հանդիսացող Հայոց արքայական տոհմերուն՝ Ուրարտական կամ Վանի թագաւորութեան, Արտաշէսեան, Արշակունեաց, Բագրատունեաց եւ Կիլիկիոյ թագաւորութիւններուն:

Տոհմիկ օրերու Համար այս տարի ունինք նոր ծրագիր: Անհամբեր կը սպասենք Երեւան գտնուող Տէրեան Մշակութային կեդրոնի Հայկական արքայական տարազները, որոնք պիտի ցուցադրուին ձեռնարկին ընթացքին: Այս առթիւ առիթ պիտի տրուի Տէրեան Մշակութային կեդրոնի Հայկական տարազներով լուսանկարուելու: Յուցադրութեան պիտի դրուին նիւթին հետ կապ ունեցող Հայաստանէն բերուած գանազան իրեր: Նաեւ լուսանկարով ժողովուրդին պիտի տրամադրուին ցուցադ-

րութեան դրուած արժէքաւոր իրերէն մէկ քանին:

Տոհմիկ օրերու խրախուսանքը պիտի ճոխացնէ սիրուած երաժիշտ Էլի Պէրպէրեանը իր նուագախումբով, յատկապէս հրաւիրուած Մոնթրէլայէն:

Այս տարի մեր նիւթը Հայոց հինգ թագաւորութիւններն են, ինչ որ կը նշանակէ 4000 տարուան վրայ երկարող Հայոց պատմութիւնը: Ամէն տարուան նման պիտի հրատարակուի գիրք մը, որուն Համար յատկապէս ստեղծուած յանձնարարութիւնները եւ կարգ մը կազմակերպչներ, գիրքի թէ՛ հայերէն եւ թէ՛ անգլերէն բաժնին համար, ամիսներ առաջ սկսան անխոնջ աշխատանքով եւ բժայնդրութեամբ ուսումնասիրել պատմաբաններու գործերը՝ Արմէն Մարաշլեանի Հայոց պատմութեան գիրքերու շարքը, Հրանդ Բասթրմաճեանի, Երուսաղէմ Փամպուքեանի հրատարակութիւնները, նաեւ մեր առաջին պատմաբան Մովսէս Խորենացիէն մէջբերումներ, Հասնելով մինչեւ Հայաստանի Հանրապետութեան Գիտութիւնների Ազգային Ակադեմիայի Պատմութեան Ինստիտուտի հրատարակութիւններուն, Արտակ Մովսէսեանի հեղինակած Հայոց թագաւորներու եւ թագուհիներու մասին վերջին գիրքերուն եւ այլն:

Գիրքին մէջ ամփոփ ձեւով պիտի գտնէք Հայ ազգին ծագումը, կազմակերպումը եւ զարգացումը իբր քաղաքակիրթ ժողովուրդ, Հայոց թագաւորներու կատարած նուաճումները, պատերազմներու ընթացքին ունեցած յաղթանակները եւ կորուստները: Քանի մը օրինակներ տալու համար յիշենք Ուրարտուի Արգիշտի Ա. թագաւորը (786-764 ՔԱ), որ կառուցել տուած է Էրեբունի քաղաքը՝ այսօրուան Երեւանը, որուն 2800-ամեակը կը տօնենք այս տարի, Արտաշէս Ա. աշխարհակալը (189-160 ՔԱ), որ միացուց Հայկական լեռնաշխարհի Հայաստանը ու Հայացած ցեղերը եւ հիմը դրաւ Արտաշէսեան թագաւորութեան, դիւանագէտ եւ տաղանդաւոր Տիգրան Բ. (95-55 ՔԱ), որ ստեղծեց հսկայ կայսրութիւն մը Մեծ Հայքէն, Կովկասէն մինչեւ միջերկրականեան եր-

կիրները՝ Լիբանան, Պաղեստին եւ Եգիպտոս, այսպիսով իր գերիշխանութեան տակ դնելով 3 միլիոն քառ. քմ. տարածք:

Պէտք է ըսել, որ ընդհանրապէս մեր Հայոց պատմութեան գիրքերուն մէջ շատ չէ խօսուած Հայոց թագուհիներու մասին, մեր ուսումնասիրութիւններուն ընթացքին հանդիպեցանք Հայաստան հրատարակուած կարգ մը գիրքերու, ուր բաւական տեղեկութիւն կայ եւ հետաքրքրական դրուագներ կը պատմուին բոլոր Հայ թագուհիներուն մասին: Օրինակ՝ Արշակունեաց Փառանձեմ թագուհին, որ յաջորդած է Արշակ թագաւորին, պատերազմ մղած է թշնամիներուն դէմ եւ 4-րդ դարու ամենէն նշանաւոր կինը եղած է իր քաղութեամբ եւ արկածախնդրութիւններով: Բագրատունեաց Գագիկ Ա.-ի տիկինը Կատրանիդէ թագուհին Քրիստոսասէր եղած է եւ Անի քաղաքին ու այլ նահանգներու մէջ տաճարներ շինել տալով Հայկական եւ քրիստոնէական դիմագիծ տուած է Հայկական Լեռնաշխարհին: Շատ հետաքրքրական դրուագ մըն ալ կայ այս թագուհիին մասին, զոր պիտի տեսնէք գիրքին մէջ: Կիլիկիոյ Լեւոն Բ. թագաւորի դուստրը՝ Զապէլ թագուհին, յաջորդաբար 2 ամուսին ունեցած է եւ անոնց հետ գահակալած է երկար տարիներ. Զապէլ թագուհին Սիս մայրաքաղաքին մէջ, 13-րդ դարուն կառուցել տուած է հիւանդանոց մը, ուր ինք, իբր գիւղական քոյր, իր դուստրերուն՝ իշխանուհիներուն հետ խնամած է անտէր հիւանդները: Այս բոլորը պիտի ներկայացուին նաեւ սեւ-ձերմակ եւ գունաւոր պատկերներով:

Գիրքին հրատարակութեան համար հարկ եղած գումարը գոյացնելու նպատակով ՀՕՄ-ը որդեգրած է հովանաւորներու դրութիւնը: Անհատներ եւ ընտանիքներ կրնան հովանաւորել թագաւորական տոհմերէն մէկը կամ թագաւոր մը, թագուհի մը, իշխան մը կամ իշխանուհի մը, ինչպէս նաեւ հովանաւորել գունաւոր էջեր եւ շնորհաւորել Տոհմիկ օրերու նախաձեռնութիւնը: Բոլոր հովանաւորներու ցանկերը պիտի գետեղ-

ուին գիրքին մէջ: Եթէ ոեւէ մէկը կը փափաքի հովանաւոր ըլլալ, կրնայ դիմել ՀՕՄ-ի վարչութեան կամ Տոհմիկ օրերու յանձնարարութիւններէն մէկուն:

Գիրքին օրինակ մը պիտի նուիրուի իւրաքանչիւր հովանաւորի, նաեւ պիտի բաժնուի ձեռնարկին օրը բոլոր ներկայներուն: Իսկ, գիրքէն յաւելեալ օրինակ փափաքողները, ձեռնարկէն ետք կրնան դիմել ՀՕՄ-ի վարչութեան:

Բովանդակալից յայտագրով Տոհմիկ օրերու Հայկական աւանդական խրախուսանքը տեղի պիտի ունենայ Շաբաթ, Դեկտեմբեր 1-ին, երեկոյեան ժամը 6:30-ին, Հայ կեդրոնի սրահին մէջ: Օրերու յայտագրին անցնելէ առաջ տեղի պիտի ունենայ գիրքին գինեձօնը եւ յայտագրէն ետք երեկոյն պիտի շարունակուի Հայկական երաժշտութեամբ խրախուսանքով. անշուշտ այդ օր ժողովուրդին պիտի հրամցուին Հայկական խմիչք, աւանդական ճաշեր, քաղցրեղէն եւ այլն:

Հայ Օգնութեան Միութեան Թո-րոնթոյի «Թուրինա» մասնաճիւղի վարչութեան եւ Տոհմիկ օրերու յանձնարարութիւն կողմէ մեր խորին շնորհակալութիւնը կը յայտնենք Հայ գաղութին, որ միշտ գնահատած է ՀՕՄ-ի գործունէութիւնը եւ ամէն տարի խուսնորամ բազմութեամբ ներկայ գտնուած է Տոհմիկ օրերու այս եզակի ձեռնարկներուն:

Այս առթիւ կոչ կ'ուղղենք հանրութեան, որ նախապէս ապահովեն իրենց տոմսերն ու սեղանները, նոր տարուան՝ Կազանդի առթիւ, իրենց ընտանիքներով ներկայ ըլլալու այս հայկական ընտանեկան խրախուսանքին: Փափաքելի է, որ Հայկական տարագ Հագուին անոնք, որոնք կարելիութիւնը ունին, եւ բոլորս միասին վայելենք Տոհմիկ օրերու 25-ամեակի տօնակատարութիւնը, նախաձեռնուած Հայաստանի Հանրապետութեան 100-ամեակի առթիւ եւ նուիրուած Հայկական թագաւորական տոհմերուն:

Ջեփիլո Տորնա

CIBC

Aline Shnorhokian
Mortgage Advisor

Tel: 1 866 231-8876
Fax: 450 688-7555
Cell: 514 797-1375
aline.shnorhokian@cibc.com

Groupes Sutton - Performer Inc.
123 Place Frontenac
Pointe-Claire, QC H9R 4Z7

Sutton

ALBERT ARKILANIAN
Courtier immobilier résidentiel
Residential Real Estate Broker

aaarkilianian@sutton.com
Cell: 514.962.8822
Bor: 514.426.9595
Fax: 514.426.9596
*certaines conditions s'appliquent

Satisfaction garantie ou je revends votre propriété gratuitement!

NISSAN | VÉHICULES D'OCCASION CERTIFIÉS | HONDA

GABRIEL

Kevork Asadourian
Directeur des ventes - usagé
Sales Manager - Pre-Owned

kasadourian@gabriel.ca

7000, Henri-Bourassa E., Anjou (QC), H1G 6C4
Tél : 514 327-7777, Cell: 514 318-4115, Téléc : 514 327-7967
www.nissangabriel.com • www.hondagabriel.com

École De Conduite

AZIG Driving School

Tel: 514-336-1110

Moniteur-Instructeur | Instruction Automatique ou manuelle
AUTOECOLEAZIG@HOTMAIL.COM
1400, rue Sauvé O, Montréal, QC H4N 1C5, Suite 1438 Centre Adonis II

Personal & Corporate Tax Returns
Financial Statements
Bookkeeping
Business Plan

NATALIE SKAFF, CPA, CGA
Comptable Professionnelle Agréée | Chartered Professional Accountant

nat.skaff@gmail.com
Tel: (514) 963 3363
2866 Rue De Chamonix
Saint-Laurent, Québec
H4R 3B7

Services available in Armenian, Arabic, English and French

BRING YOUR OWN WINE

NAZARETH
CLASSIC GRILL

550 Curé Labelle, suite 17, Ste-Rose, QC H7L 4V6
Tel: 450.937.4064
Email: resto.nazareth@hotmail.com

SAMUEL TOPALIAN
450 682-1644

AUTO SAMSON

MÉCANIQUE GÉNÉRALE - REMORQUAGE
SERVICE DE PNEUS MISE AU POINT

4700 BOUL. SAMSON, CHOMEDEY LAVAL, QC.

ՀԱՅԿ ԿԱՐՊՈՒՆԵԱՆ

Hayk Hartounian
Courtier immobilier résidentiel
Residential Real Estate Broker

C 514.574.6162
B 514.333.3000

NETTOYEUR MARIE-CLAIRE

CUEILLETTE ET LIVRAISON GRATUITE
À DOMICILE ET AU BUREAU (MONTRÉAL ET LAVAL)

2535 de Salaberry, Montréal | Tél: 514.334.7830

«Հորիզոն»ի լուսանկարիչ Իշխան Ղազարեան գնահատագրի արժանացաւ

Նոյեմբեր 9-ին, Թորոնթոյի մէջ կայացած «Գանատայի Համայնքային մամուլի խորհուրդի» գնահատագրերու տուչութեան ընթացքին, «Հորիզոն»ի լուսանկարիչ Իշխան Ղազարեանի շնորհուցեալ յատուկ գնահատագիր, լրագրական մարզին մէջ իր կամուր ծառայութեան համար: Իշխան Ղազարեան երկար տարիներէ ի վեր «Հորիզոն»ի Օնթարիոյի պաշտօնական լուսանկարիչն է եւ ամէն տարի Ապրիլ 24-ին ներկայ եղած է Օթթաուայի ժողովրդային հաւաքին՝ իր լուսանկարներով արխիւագրելու Ապրիլ 24-ի քայլերթի դրուագները: Իշխանի լուսանկարները վերջերս հրատարակուեցան Գանատայի National Geography-ի տարբերակին մէջ: Գնահատագրերը Իշխանին յանձնեց «Գանա-



տայի Համայնքային մամուլի խորհուրդի» նախագահ Թամըս Սարաս: Հանդիսութեան ակտիւն Իշխանին շնորհաւորեցին Օնթարիոյի նահանգային խորհրդարանի անդամ Արիս Պապիկեան եւ «Հորիզոն»ի աշխատակից

Ժագ Վարպետեան: Նշենք, որ 2009-ի Սեպտեմբերին «Հորիզոն»ը Գանատայի Համայնքային լաւագոյն լրատուամիջոցի գնահատագիր ստացած է Գանատայի վարչապետ Սթիվըն Հարփըրի ձեռամբ:

Տոքթ. Արմէն Մարտիրոսեան պարգևատրուեցաւ «Մեսրոպ Մաշտոց» շքանշանով



ՆՍՕՏՏ Արամ Ա. Վեհափառ Հայրապետի տնօրինումով եւ Գերաշնորհ Տ. Բաբգէն Արք. Չարեանի ձեռամբ, տոքթ. Արմէն Մարտիրոսեան պարգևատրուեցաւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան «Մեսրոպ Մաշտոց» շքանշանով, Կիրակի, 4 Նոյեմբեր 2018-ին, Թորոնթոյի Ս. Աստուածածին Հայց. Առաքելական եկեղեցւոյ մէջ, յընթացքս Ս. եւ Աննա Պատարագին: Ան երկար տարիներ Թորոնթոյի ՀՕՄ-ի Ամէնօրեայ վարժարանին տնօրէնի պաշտօնը վարած է եւ սերունդներ դաստիարակած, իր լուծման դրած է հայ մշակութային եւ կրթական ասպարէզներու մէջ եւ անդամ եղած է Համագրային Հայ Կրթական եւ Մշակութային Միութեան:

Առաջնորդ Սրբազան Հայրը յանուն Թեմիս Կրօնական ժողովին եւ Ազգային վարչութեան, շնորհաւորեց տոքթ. Մարտիրոսեանը եւ մաղթեց առողջ եւ երկար կեանք ու մանաւանդ յաջողութեամբ լեցուն տարիներ, իրեն եւ իր ընտանիքին:

Թեմակալ Առաջնորդներու հանդիպում Նիւ Եորքի մէջ



Ուրբաթ, 9 Նոյեմբեր 2018-ին, Գերաշնորհ Տ. Բաբգէն Արք. Չարեան այցելեց ԱՄՆ Արեւելեան Թեմի Առաջնորդարան, Նիւ Եորք, ուր յատուկ հանդիպում մը ունեցաւ նորընտրեալ Առաջնորդ Գերաշնորհ Տ. Անուշաւան Եպս. Գանիւլեանին հետ եւ պաշտօնապէս շնորհաւորեց անոր ընտրութիւնը՝ որպէս Թեմակալ Առաջնորդ:

Առաջնորդները խօսեցան Թեմերու համագործակցութեան եւ կարգ մը ծրագրերու իրականացման կառելիութիւններուն մասին, ինչպէս նոր Կատարանի եւ Նարեկ աղօթագիրքի հրատարակման, մանուկներն ու պատանիները հետաքրքրող կրօնական օգտակար ծրագրերու պատրաստութեան եւ այլ հնարաւորութիւններու մասին:

Բաբգէն Արքեպիսկոպոս բեղուն գործունէութիւն մաղթեց Սրբազան Նոր, ինչպէս նաեւ ամենայն բարիք առաջնորդելու համար իրեն վստահուած Թեմը:

«Հորիզոն» հարցազրոյց ունեցաւ Գանատայի խորհրդարանի անդամ Ժան Եիբի հետ



Շաբաթ, Նոյեմբեր 3-ին, «Հորիզոն» հարցազրոյց ունեցաւ Թորոնթոյի Սգարպորո-էյնկորթ (Scarborough-Agincourt) ընտրատարածքի երեսփոխան տիկին Ժան Եիբի հետ: Գանատայի վարչապետ Ճասթին Թրուտոյի Հայաստան կատարած պատմական այցելութեան ընթացքին, վարչապետին ընկերակցող պատուիրակութեան հետ հրաւիրուած էր նաեւ տիկին Ժան Եիբը, որ Գանատա-Հայաստան խորհրդարանական բարեկամութեան խմբակցութեան նախկին նախագահ Առնոլտ Չէնի կողակիցն է: Ժան Եիբ ներկայիս անդամ է Գանատա-Հայաստան խորհրդարանական բարեկամութեան խմբակցութեան:

Հարցազրոյցի ընթացքին տիկին Ժան Եիբը մանրամասնօրէն անդրադարձաւ Հայաստան այցելութեան մասին, եւ մասնաւորապէս գեկուցեց, Առնոլտ Չէնի յիշատակին հիմնուած Հայաստանի մէջ ժողովրդավարութեան զարգացման նախաձեռնութեան մասին: Հարցազրոյցը կատարեց «Հորիզոն»ի Թորոնթոյի աշխատակից Սարին Փօլատեան-Արիկեան: Հարցազրոյցը շուտով լոյս կը տեսնէ «Հորիզոն»ի կայքէջին վրայ:

ՀՕՄ-ի «Տեւրական 2020» յանձնախումբի ձեռնարկին հանգանակուեցաւ 20 հազար տոլար



Հոկտեմբեր 21-ին ՀՕՄ-ուհիներ եւ համակիրներ Թորոնթոյի Donald Club-ին մէջ կազմակերպած էին հաւաք մը: ՀՕՄ-ի «Տեւրական 2020» յանձնախումբին կողմէ կազմակերպուած այս հաւաքին նպատակը Հայ Օգնութեան Միութեան Հաստատարին Հիմնադրամին (Endowment Fund) ի նպաստ հանգանակութիւնն էր:

ՀՕՄ-ի Կեդրոնական վարչութեան Հաստատարին Հիմնադրամին նպատակն է հասոյթ ապահովել միութեան առկա ծրագրերուն, ինչպէս նաեւ մշակութային եւ կրթական ապագայ նախաձեռնութիւններուն: Հիմնադրամը արդէն իսկ գոյացուցած է 2.5 միլիոն տոլարի գումար մը, սակայն կը նախատեսուի մինչեւ 2020 այդ գումարը հասցնել հինգ միլիոնի:

Ձեռնարկին ներկայ էին գլխաւոր հովանաւոր տիկ. Արմենուհի Գոլոբեան, ՀՕՄ-ի Տեւրական 2020 յանձնախումբի ատենապետ Նայիրի Շահինեան, ՀՕՄ-ի Կեդրոնական վարչութեան անդամ Վարսենիկ Սարգիսեան, թէյյասեղանի յանձնախումբի ատենապետ Արփի Պապիկեան եւ ՀՕՄ-ի շրջաններու վարչութեանց անդամներ:

Հանդիսավար Թամար Մաթոսեան անդրադարձաւ ձեռնարկին նպատակին, ապա տիկ. Մարիլին Միրապետի բացատրութիւններ տուաւ թէյին եւ անոր օգտակարութիւններուն մասին, որմէ ետք Մինէ Մատուրեան մեկնաբանեց «Տուն իմ հայրենի» եւ «Pardonne-Moi» երգերը:

Տեղի ունեցաւ նաեւ լուռ աճուրդ բաղամթիւ արժէքաւոր իրերու: Ձեռնարկի ընդհանուր հասոյթը հասաւ 20,000 տոլարի:

«Փոքրերու պատմութեան ժամ»

Ուրբաթ, 19 Հոկտեմբեր 2018-ին տեղի ունեցաւ Համագրայինի «Սանահին» մասնաճիւղի «Գիրքը՝ մեր ընկերը, պատմութիւնը մեր երեւակայութիւնը» նշանաբանով՝ «Փոքրերու պատմութեան ժամ»ի 2018-2019 տարեշրջանի անդրանիկ հաւաքը, Համագրայինի «Մուշեղ Իշխան»



գրադարանէն ներս: Բոլոր փոքրիկները խանդավառ էին վերագտնելով իրենց ընկերները եւ սիրելի պատասխանատուն: Հին ընկերներուն կողքին, նորեր ալ միացան խմբակին:

Երբ բոլոր փոքրիկները գորգին վրայ իրենց տեղերը գրաւեցին, Արփի Սողոմոնեան ընթերցեց Այտա Պ. Մինասեանի «Անին ու Արան»:

«Անին» ու «Արան» իրենց իմաստութեան եւ ճարպիկութեան շնորհիւ կրցան դուրս գալ իրենց հանդիպած արկածախնդրութիւններէն եւ միանալ իրենց հօրը՝ պապենական տան մէջ: Պատմողին դերակատարի փորձառութեան շնորհիւ փոքրիկները պատմութեան իրենց նախասիրած տիպարին դերը ընտրելով կենդանի պատկերներ կայացուցին: Այս միջոցաւ յայտնաբերեցին իրենց թատերական ձիրքերն ու տաղանդները: Անսահման երեւակայութեան տեղի տալով՝ դերերը փոխեցին իրենց ճաշակին համեմատ եւ տեղափոխուեցան հեքիաթային աշխարհ, խաղարկութեան տալով իւրապատուկ շունչ եւ ոգի: Պատմողը նոյնիսկ փոքրիկ անակ մը տրամադրած էր բեմագրութեան համար, որուն մէջ մեծ հաճոյքով մուտք եւ ելք գործեցին փոքրիկները:

Ձեր երեխաներն ու թոռները կրնան ընկերակցել մեզի եւ ճոխ յայտագրերին իրենց մասնակցութիւնը բերել, իւրաքանչիւր ամսուան երրորդ Ուրբաթը, երեկոյան ժամը 6-7, հեռաձայնելով Մեղրիին՝ 514 826-1075, կամ գրելով հետեւեալ ե-հասցէին meghe7@hotmail.com:

Ռոզմարի Սահակեան

«Տագնապած Մրջնանցի» Վերածուած Հայաստանի Հանրապետութեան Ապագայից Մասին

Նիկոլ Փաշինեանն իշխանութեան եկաւ շէ-ուս արմատացած փտածութեան, պետական համակարգում առկայ բազմաթիւ արատաւոր երեւոյթները դէմ պայ-քարելու, երկրում օրէնքի գերակայութիւն եւ արդա-րութիւն հաստատելու մասին յայտարարութիւններով, կոչերով եւ կարգախօսներով:

Արդէն վարչապետի աթոռին նստելու յաջորդ պահից սկսած՝ շէ-ուս ծայր առան մայրաքաղաքային եւ մարզային նախկին մանր ու խոշոր պաշտօնեաների, այդ թուում նաեւ ուժային կառոյցների ներկայացու-ցիչների հանդէպ յարուցուած քրէական գործերը, ըստ որոնց, բացառապէս էին բազմաթիւ եւ բազմապիսի չարաշահումներ եւ պետութեանը հասցուած վնասներ: Այդ գործընթացը շարունակուած է նաեւ այսօր:

Ինչպիսի՞ ազդեցութիւն կամ հետեւանքներ կա-րող է ունենալ այս ամէնը շէ գարգացման վրայ: Ի հարկէ, եթէ երեւոյթին նայենք զուտ տեսականօրէն՝ միմիայն դրական եւ կրկին դրական: Հակառակի մասին խօսելը կարող է անգամ տարօրինակ կամ զաւելտալի թուալ: Այդուհանդերձ, իրերի խորքը քննելիս ի յայտ են գալիս բազմաթիւ խուժեր, ներքին գարգացումներ, երեւոյթներ, որոնք ոչ միայն ստուեր են նետում վե-րոնշեալ դրականի վրայ, այլեւ կարող են երկիրը կանգ-նեցնել տնտեսական, ինչո՞ւ էլ է, նաեւ քաղաքական, փլուզման առջեւ: Հնարաւո՞ր է դրանցից խուսափել, ինչպէ՞ս են շրջանցել աշխարհի յայտնի գործիչներն այդ անխուսափելի դժուարութիւնները, եւ ի՞նչ ունենք այսօր շէ-ուս:

Վերջին հարցադրումից սկսելով՝ փաստենք, որ այն գործողութիւնները, որոնք իրականացուած են այ-սօր Փաշինեանի խմբակի կողմից, միտում ունեն ոչ թէ վերացնելու, այլ խորացնելու նշեալ տնտեսաքաղաքա-կան աղէտը՝ հասցնելով երկիրը կատարեալ ֆիսաքոյի եզրին, որի պատճառով կարճ ժամանակ անց օրինաչա-փօրէն կրկին ի յայտ կարող են գալ քաղաքացիական անհնազանդութիւններ:

Ի՞նչ է արուած այսօր շէ-ուս: Երկրի ուժային կա-ռոյցների համապատասխան օղակները եւ վարչապետին առընթեր Պետական վերահսկողական ծառայութիւնը՝ մի կողմից, պետական համակարգի, Փաշինեանի խմբա-կի անդամ, մանր ու խոշոր չիւնովնիկները՝ միւս կողմից, ինչպէս երկրի բոլոր ոլորտներում, այնպէս էլ նախկին իշխանութիւնների օրօք աշխատանքային գործուէնու-թիւն ծաւալած գրեթէ բոլոր պաշտօնեաների նկատ-մամբ (նրանցից շատերը, ի դէպ, շարունակում են աշ-խատել նաեւ ներկայումս) իրականացնում են ստու-գումներ, կիրառում տարբեր բնոյթի եւ չափի պատժիչ գործողութիւններ (տուգանում, աշխատանքից ազա-տում, քրէական վարոյթների յարուցում) եւ այլն: Առա-ջին հայեացքից՝ բնական եւ ողջունելի այս գործողու-թիւնների դրական եւ բացասական հետեւանքները, սա-կայն, ունէ մէկը չի հաշուարկել եւ դրել նժարի վրայ:

Խնդրի բարոյական գործօնը

Նախ՝ փաստենք, որ վախի ու կասկածանքի այս-պիսի մթնոլորտը արդիւնաւէտ եւ ստեղծարար աշխա-տանքի համար երբեք չի կարող ստեղծել բաւարար պայմաններ, այն ընդամէնը հասարակութեան ներսում տեղի է տուել ներքին գզվուտոցների՝ կտրուկ աւելաց-նելով միմեանց դէմ պայքարողների, շէֆի աչքը մտնե-լու համար գործընկերօրը մասնողների թիւը, եւ այս-պիսի իրավիճակում յայտնուած շէ իրականութիւնն այդ մասով պարզապէս յիշեցնում է պոլշեիկ-մենշեիկ առճակատումների շրջանը: Ինչ վերաբերում է խոշոր տնտեսավարողներին, ապա վերջիններս ուղիղ ձեւով կի-րառում են հին ու բարի, բազմիցս փորձուած մեթոտը-քրէական եւ տնտեսական հողի վրայ պատժուելու վա-խից նրանք, արագօրէն ճամբարափոխ լինելով, սկսել են «նոր թագաւորին» քծնելու, վերջինիս գուժը շարժելով՝ նոր հովանի գտնելու արգահատելի եւ վտանգաւոր դրսեւորումները: Սա հետեւանքների բարոյական բա-ղադրիչն է:

Խնդրի տնտեսաքաղաքական հետեւանքները

շէ-ուս իւրաքանչիւր ոք, լինի նա պաշտօնեայ, գործարար, բժիշկ, դասախօս կամ ցանկացած մէկը, նախկին համակարգի ժամակակ, օրինաչափօրէն, կամայ թէ ակամայ, շարժուել է տուեալ համակարգի սահմանած խաղի կանոններով: Արդիւնքում՝ շէ-ուս գերակշռում են նրանք ովքեր չեն ապրել «մաքրամաքուր» կեան-քով: Մէկը կաշառք է տուել հարկային ոլորտի աշխա-տողներին՝ սեփական պիզնեսի կայացման համար, մէկը թաղային ոստիկաններին կամ քաղաքապետարանին՝ պատշգամբը փակելու կամ մայթին մի խանութ կառու-ցելու համար, մէկը՝ գիւղապետարանին, մէկը՝ մարզպե-տարանին, մէկը՝ բժշկին, մէկը՝ դասախօսին, մէկը մի խոշոր ոլորտ իր ձեռքում պահելու համար «տեսել է» նախագահականին մերձակայ մէկին, մէկի վրայ վերեւ-

ներից դրուած է եղել տարեկան կամ ամսական մուծման չափաբաժին, եւ նա էլ իր հերթին նոյնը կիրառել է իր ենթականների վրայ... եւ այսպէս՝ անվերջ ու անընդհատ մի շղթայ...

Փաշինեանի խմբակի հակափտածութեան գործո-ղութիւններով ստեղծուած մթնոլորտում՝ երկրի ազ-գաբնակչութեան մէկ հատուածը, որն այս կամ այն կերպ առնչուել է փտածութեան այս կամ այն տեսակի հետ, յայտնուել է իւրատեսակ փակուղու առջեւ:

Յաւելենք նաեւ, որ խոշոր տնտեսավարողներից, հասկանալի պատճառներով, ոչ բոլորին է յաղողուած կիրառել վերոնշեալ «ճամբարափոխութեան» եւ «պաշ-տամուկային» գործիքները. շատերը, ամուր թիկերով կապուած լինելով նախկին վարչակազմների հետ, պար-զապէս դա չեն կարող անել:

Արդիւնքում՝ պատժուելու, տարիների ընթաց-քում կուտակածը (նաեւ՝ ստեղծածը) մէկ օրում կորցնե-լու վախից, պաշտօնը կամ հասարակութեան մէջ ունե-ցած հեղինակաւոր դիրքը կորցնելու տագնապից երկ-րում սկսուել է նախադէպը չունեցող «գօրաշարժ» առնչտավազք՝ պաշտօնեաների շրջանում, սկսած՝ գիւ-ղապետերից, մինչեւ միջին օղակի չիւնովնիկներ ու բարձրագոյն մարմինների ներկայացուցիչներ: Պիզնեսի տեղափոխում ապահով վայրեր՝ Փաշինեանի քաղաքա-կան հովանու ներքոյ, կամ արտերկիր: Դրամական մի-ջոցները եւս տեղափոխուած են աւելի գաղտնի եւ իրա-ւապահ մարմինների համար համեմատաբար դժուարա-մատչելի վայրեր, կամ այս ոլորտում եւս տեղի է ունե-նում աննախադէպ արտահոսք դէպի օֆշորային գօտի-ներ, արտերկրեայ տնտեսական միջավայր եւ այլն:

Այսօր շէ-ուս ստեղծուած նշեալ իրավիճակն աւելի պատկերաւոր ներկայացնելու համար այն կարելի է համեմատել քարի տակ գտնուող մըջնաքնի հետ, երբ քարի հեռացմամբ ստեղծուած «արտակարգ իրավիճա-կից» տագնապած՝ իւրաքանչիւր մըջին խուճապահար ձգտում է գլուխը փախցնել ապահով մի վայր: Աւելորդ չենք համարում նշել, որ այսպիսի պայմաններում, շէ նոր իշխանութիւնների քիմքին ոչ այնքան հաճոյ նախկին շատ խոշոր տնտեսավարողներ ոչ միայն ձեռն-պահ են մնում նոր գործեր ձեռնարկելուց, այլեւ ներդ-րումներ չեն անում անգամ իրենց գործող պիզնեսնե-րում (չուտով նկատելի կը դառնան սրա տնտեսական ծանր հետեւանքները): Այս իրողութիւնը փակ աչքերով տեսնում են նաեւ արտաքին՝ Ե՛ւ սփիւռքեան, Ե՛ւ օտա-րագրի ներդրողները, իսկ նոր իշխանութիւնների՝ ներդ-րումների ակնկալուող աշխուժութեան մասին յայտա-րարութիւնները նախընտրական պարզ հնարքներ են: Ներդրումների ներկայ պատկերը ոչ մի ընդհանուր աղերս չունի լաւ կեանքի համար գարնանը փողոցներ փակած մարդկանց սպասումների հետ:

Մեզ հակադարձողները կարող են պնդել, որ խո-շոր տնտեսավարողների կամ նախկին (որոշ դէպքերում՝ նաեւ ներկայ) պաշտօնեաների կուտակած դրամապու-խը, աւելի՛ն, անօրինական ճանապարհով ձեռք բեր-ուած իւրաքանչիւր քաղաքացու (գիւղապետ, քաղա-քապետ, համայնարանի նախագահ, բաժնի կամ վար-չութեան պետ, դասախօս, բժիշկ, ոստիկան, զինուորա-կան եւ այլք) ունեցուածքը պէտք է վերադարձուի պե-տական գանձարան, եւ այս հարցը քննարկման ենթա-կայ չէ: Կրկնում ենք՝ զուտ տեսականօրէն վերջիններս միանգամայն իրաւացի են: Մենք վերեւում արդէն խօ-սեցինք այս առթիւ իրականացուող գործողութիւնների բարոյական եւ տնտեսաքաղաքական հետեւանքների մասին:

Այժմ մատնանշենք, թէ որքանո՞վ է դա հնարա-ւոր, ինչպիսի՞ ժամկէտներում եւ որքա՞ն է դրա օգտա-կար գործողութեան գործակիցը (ՕԳԳ): Մի պարզ հիմ-նարկից եթէ փորձենք անօրինական ճանապարհով մի շատ սովորական տեղեկանք վերցնել, ապա վերջինիս, անգամ՝ ոչ փորձառու, ղեկավարը տեղեկանք կը տրա-մադրի տասն անգամ ծանր ու թեթեւ անելուց, մի քանի հաշուապահի ու իրաւաբանի հետ խորհրդակցելուց յե-տոյ միայն: Պարզորոշ է, որ տասնեակ տարիներ անօրի-նական ճանապարհով հարստացած տնտեսավարողները կամ պաշտօնեաները եւս խոտակիր չեն եղել եւ այսօր-ուայ մասին «հոգացել են» շատ վաղուց: Պարզորոշ է նաեւ, որ վերջիններս ձեռքից գուճարների բռնազան-ձումը պետպիւտճէ տեսական ժամանակ պահանջող, շատ պարագաներում էլ անհնարին մի գործընթաց է: Աւելի՛ն. բռնազանձումների եւ ծաւալուն ստուգում-ների այս թոհուբոհում առաւել մեծ թափ է ստացել «տագնապած մըջնաքնի» շարժը, եւ բոլորը լեղապա-տառ այս ու այն կողմ են թաքցնում այդ գումարները, անխնայ ոչնչացնում հետքերը կամ ամրացնում հիմքե-րը (դէպի արտերկիր դրամական հոսքերի մասին այս-տեղ եւս պէտք է յիշեցնենք):

Չենք կարող չխօսել նաեւ այն իրողութեան մա-սին, որ նոր իշխանութիւններն իրենց այս հակափտա-ծութեան գործողութիւններին ձգտում են տալ հանրա-յին մեծ հնչեղութիւն, դեռ փաստեր կամ արդիւնքներ ցոյց չտուած՝ յայտարարում են «լուրջ կասկածների», «սպասուելիք բացայայտումների», «չուտով հրապա-րակուելիք ցնցող լուրերի» եւ այլնի մասին: Տպաւորու-թիւն է, որ իշխանութիւնների նպատակը ոչ թէ չարա-շահուածները վերացնելն է, այլ այդ ճանապարհով, հան-րութեան աչքին, Պեգասին թամբած դէպի ազատու-թեան Պառնաս սլացող ասպետի կերպարի մէջ մնալը: Այստեղ յիշեցի վրացական իշխանութիւնների կողմից վերջերս ներդրուած երկրագուհայ ուսուցման համակար-գը Ջաւախքում, երբ մէկ պարբերութիւն հայոց, մէկ՝ վրաց լեզուներով կազմուած գիտութեան, բնագիտու-թեան կամ ուսողութեան դասագրքերը նպատակ են հե-տապնդում ոչ թէ աշակերտին սովորեցնել տուեալ առարկաները, այլ տուեալ առարկաների միջոցով դպրոցներում անխնայ կիրառել վրացերէնը: Սրանք բոլորովին տարբեր բաներ են:

Ի՞նչ է անել: Թողնել, որ անօրինական ճանապար-հով կուտակածը վայելե՞ն. այսպիսի հարցադրում կ՛ա-նեն շատերը: Ահա այստեղ է, որ Ն. Փաշինեանը պէտք է, իր խմբակի բառամթերքով ասուած, քայլ անի, հա-մարձակ՝ պատմակա՛ն քայլ, ինչպէս արեց 2018 թ. գարնանը: Փաշինեանը պէտք է քաշի հին եւ նոր իրա-կանութիւններն իրարից բաժանող պատմական գիծը, որից այն կողմ անցեալի միջավայրն է՝ իր փտած համա-կարգով ու արատաւոր երեւոյթներով: Գծից այս կողմ նոր միջավայրն է, որտեղ իրապէս գործում են օրէնքնե-րը, որտեղ հետայսու ամենախիստ կերպով կը պատժուեն օրինազանցները, որտեղ հին յիշողութիւններ են դառ-նում չարաշահումները, հովանաւորչութիւնը, կաշառ-քը, փտածութեան այլեւայլ դրսեւորումներ եւ այլն, որտեղ պիզնես միջավայրն իրապէս ազատ է, եւ չկան այնտեղ իշխանական միջամտութիւններ կամ խանդա-րիչ այլ գործօններ, որտեղ բացակայում է վախի, կա-կածանքի մթնոլորտը, որտեղ բոլորը ենթարկուած են ոչ թէ իշխանութիւնների քամահաճոյքներին, այլ օրէնքին, որտեղ ոչ ոք այլեւս ջանք չի թափում ճամբարափո-խութեան եւ առնչտավազքի միջոցով փրկել սեփական պիզնեսը կամ յաւերժացնել իր պատգամաւորական մանդատը, որտեղ ոչ ոք այլեւս չի մտածում սեփական դրամական միջոցներն աւելի խորը թաղելու կամ երկ-րից դուրս փախցնելու մասին. շարքը կարելի է շարու-նակել, բայց բաւարարուենք այսքանով:

Չպատժե՞լ ոչ ոքի: Իհարկէ պատժե՛լ՝ հինգ հոգու, տասնհինգ հոգու (թուերը պայմանական ենք նշում)՝ լաւագոյնս հաշուարկուց յետոյ միայն, թէ պատժական այդ տնօրինումները որքանով կը նպաստեն պետական համակարգի կամ պիզնես միջավայրի առողջացմանը: Այլապէս՝ մեկնել հեռաւոր գիւղական վայրեր եւ գին-ուած-դիմակաւորուած անձանց միջոցով գետնին պառ-կեցնել գիւղական խեղճուկրակ պաշտօնեաներին, ներ-խուժել մայրաքաղաքային եւ մարզային տարբեր հաս-տատուութիւններ, բարեւելուց յետոյ աջ ու ձախ կա՛մ պահանջել հեռանալ, կա՛մ ցոյց տալ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցութեան գրասենյակի տեղը (սա, իհարկէ, ոչ բարձրաձայն) կա՛մ, որպէս մեղադրեալ, ներկայանալ դատուելու՝ սա ոչ մի լաւ տեղ չի տանելու մեր երկիրը:

Ի վերջոյ պէտք է գիտակցել, որ նախկին արատա-ւոր համակարգը ստեղծել են մի խումբ մարդիկ, իսկ դրա գերին՝ ինչպէս սեփական կամքով, այնպէս էլ դրանից անկախ, դարձել են միլիոնաւորները: Պատժելով այդ եզակիներին եւ «համակարգի գերութիւնից» կամ «ճահճային համակարգից» ազատելով միլիոնաւորնե-րին՝ երկրում կը ստեղծուի իրապէս առողջ ու ստեղծա-րար մթնոլորտ, եւ նախկին համակարգի բոլոր ներկա-յացուցիչները, չվախենալով կորցնել իրենց կուտակած դրամապուխը եւ տեսնելով իրական երաշխիքներ՝ դրանք կը ներդնեն երկրի տնտեսութեան մէջ՝ գարգաց-նելով արտագրութեան եւ ծառայութիւնների ոլորտը եւ այլն: Արդիւնքում՝ երկրում անօրինական ճանապար-հով առաջացած նշեալ դրամապուխը աւելի հեշտ ճա-նապարհով ու կարճատեւ ժամկէտներում կը յայտնուի տնտեսութեան մէջ, քան՝ վերոնշեալ բռնի մեթոտների, դատական մղձաւանջների միջոցով: Այսպիսի «ինքնա-կամ» երկրի տնտեսութիւն հոսող դրամապուխի մեծու-թիւնը հազարապատիկ անգամ աւելին կը լինի, եթէ այն համեմատենք դատական քաշքշուկների արդիւնքում երկրի պիւտճէ մուտքագրուելիք խղճուկ միջոցների հետ: Ի վերջոյ՝ բոլորն են հասկանում, որ դատական

ԳԵՂՕՏ Հաւատարմութեան

Ողջո՞յն հաւատարմութիւն ցուցաբերողներուն:
Անոնց՝ որոնք հաւատարիմ կը մնան ամբողջ
կեանք մը:

Անոնց՝ որոնք աջն ու ձախն փչող հողմերէն
չեն տատանիր:

Անոնց՝ որոնք ոսկի-արծաթ խայծերէն չեն գայ-
թակղիր:

Անոնց՝ որոնք փորձութեան մատնող հրապոյրնե-
րէն չեն առգրաւուիր:

Անոնց՝ որոնք ունին կողմնացոյց եւ ունին վեհ
նպատակ:

Ահա ասոնց կը նուիրեմ այս գեղօնը:

— Այն այրերուն, որ տէր կը կանգնին իրենց կի-
ններուն, նոյնիսկ երբ ուրիշ հուրի-փերիներ կը ֆուռան
իրենց շուրջ:

Տեսանք ու տեւաբար կը տեսնենք, թէ ինչպէս
լապտերին շուրջ թարտացող միջատներու նման այրեր
կ'այրին ու գահավէժ վար կ'իյնան իրենց գրաւած ամե-
նէն բարձր գիրքերէն անգամ: Տեսանք նաեւ՝ ինչպէս
տակաւին իրենք իրենց ամեն ազատութիւն վերապահող
ու բոլոր կիները իրենց քմայքներուն ենթարկելու յա-
ւակնող մարդիկ՝ տր'մարդիկ տակաւին կը շրջին հրա-
պարակներուն վրայ առանց դոյզն ամօթի ու գղջումի:
Եւ ուշադրութեան կ'արժանան: Ընտանիք լքող, գա-
ւակներէն հրաժարող տեսակաւոր արարածներ:

Բայց կա՛ն միւսները՝ հաւատարիմները, ու բա-
զում են անոնք: Ողջո՞յն անոնց:

— Այն կիներուն, որ տէր կը կանգնին իրենց այ-
րերուն, հակառակ լուսիններ՝ խոստացող գերայրերուն՝
«սուփրմէն»-ներուն, որ կը փորձեն դիւթել ու իրենց
ոստայնին մէջ առնել գիրքերը:

Տեսանք ու տեւաբար կը տեսնենք, թէ ինչպէս
այնպիսի արագութեամբ շատեր կ'իյնան թակարգը,
մոռցած սէր, խոստում եւ ամեն սրբութիւն, անգամ
դուստր եւ որդի: Տեսանք նաեւ ինչպէս այրորսութիւնը
գաւանանքի կան վերածողներ: Անամօթ ու անպատ-
կառ:

Բայց կա՛ն միւսները՝ հաւատարիմները, ու բա-
զում են անոնք ալ: Ողջո՞յն անոնց:

— Այն ծնողներուն, որոնք ամբողջովին նուիր-
ուած են իրենց զաւակներու հոգածութեան ու դաստիա-
րակութեան, նոյնիսկ երբ անոնք տկար եկած են աշ-
խարհ, թերի կամ արտահար:

Այո, կան միւսները, ծնած պահէն զաւակը գամ-
բիւղի մը մէջ որբանոցի մը դրան առջեւ ձգողները,
զաւակ մեծցնելու նիւթական թէ բարոյական միջոցնե-
րէն զրկեալները, իրենց ասպարէզն ու հաճոյքները գա-

ւակներէն գերադասողները ու մասամբ նորին:

Բայց կա՛ն միւսները՝ հաւատարիմները, ու բա-
զում են անոնք եւս: Ողջո՞յն անոնց:

— Այն զաւակներուն, որոնք չեն լքեր իրենց
ծնողները, իրենց բոլոր այլ պարտաւորութիւնները կա-
տարելով հանդերձ, տէր կը կանգնին իրենց տարիքը
առնող հայրերուն եւ մայրերուն, չեն զլանար խնամք
ու դուրբուրանք:

Այո, կան միւսները, որոնք չեն զգար այդ պար-
տաւորութիւնը իրենց ծնողներուն հանդէպ, կամ ստի-
պողաբար չեն կրնար աւելին ընել ու լաւագոյն պարա-
գային շքեղ հանգստեան տուն մը կը գտնեն անոնց
համար, յոռեգոյն պարագային... ով գիտէ ինչպէ՛ս կը
վարուին յոռեգոյն պարագային:

Բայց կա՛ն միւսները՝ հաւատարիմները, ու բա-
զում են անոնք նոյնպէս: Ողջո՞յն անոնց:

— Անոնց, որոնց բարոյական ըմբռնումները օր-
ուան ու պարագային համեմատ հագուստ փոխելու պէս
չեն փոխուիր:

Գիտենք որքան դիւրին է բարոյախօսութենէ ճա-
ռել, ջատագովը հանդիսանալ բարոյական վսեմ
սկզբունքներու, բայց նոյնքան դիւրութեամբ ըլլալ
ստախօս, ըլլալ անպարկեշտ եւ այլն, վնասել թէ՛ շրջա-
պատին եւ թէ՛ սեփական առողջութեան ու կեցութեան,
ուրիշին «ոտքին տակ օճառ քսել», ինքզինք մեկու-
սացնել հաւաքական-հասարակական կեանքէն, խուսա-
փիլ պետութեան հանդէպ պարտաւորութիւններէ, չկա-
տարել ազգային ու քաղաքացիական պարտականու-
թիւնները:

Բայց կա՛ն միւսները՝ հաւատարիմները, ու բա-
զում են անոնք նոյնպէս: Ողջո՞յն անոնց:

— Անոնց, որոնք ունին կոչում եւ կոչումին այդ
կը նուիրուին անմնացորդ, թէկուզ ստիպուած ըլլան
իրենց ապրուստը հոգալ այլ ճամբով, կամ ապրել հա-
մեստագոյն պայմաններու մէջ:

Այո, կան դժբախտներ, որոնք իրենց կոչումին չեն
ծառայել, կամ չեն կրնար ծառայել, կամ նիւթական
խայծերը իրենց համար աւելի քաշողական կը դառնան,
ու մարդկութիւնը կը զրկուի իրենց ներդրումէն, անոնք
ըլլան արուեստագէտ, մասնագէտ թէ ընկերային ծա-
ռայող:

Բայց կա՛ն միւսները՝ հաւատարիմները, ու բա-
զում են անոնք: Ողջո՞յն անոնց:

— Անոնց, որոնք ունին կեանքի վեհ նպատակ, կը
հետապնդեն գայն առանց վհատելու, խոչընդոտներու
առջեւ առանց ընկրկելու:

Այո, կան այս մոլորակի վրայ իրենց կեցութիւնը

աննպատակ անցընողներն ալ կամ սեփական շահէն ու
հաճոյքէն անդին այլ նպատակ չունեցողներն ալ:

Բայց կա՛ն միւսները՝ հաւատարիմները, ու բա-
զում են անոնք: Ողջո՞յն անոնց:

— Անոնց, որոնք քսակները միշտ կը բացուին, երբ
իրենց սրտին խօսող իրագործման մը համար կը դիմուի
իրենց՝ ատիկա ըլլալ հաւաքականութեան բարօրու-
թեան, ազգային նպատակի մը կամ հայրենիքին համար:

Այո, կա՛ն քսակները չբացողներ ալ, անտարբեր-
ներ ու «ես»-ը «մենք»-էն վեր դասողներ, հաւաքա-
կանութենէն օգտուողներ՝ բայց հաւաքականութեան
երբե՛ք չօգնողներ: Փոքր չէ ասոնց թիւը:

Բայց կա՛ն միւսները՝ հաւատարիմները, ու բա-
զում են անոնք: Ողջո՞յն անոնց:

— Անոնց, որոնք ունին տեսլական-գաղափարա-
կան, հաւատարմօրէն կը ծառայեն անոր, առանց տա-
տանելու, առանց յուսահատելու՝ ամենէն անբարեն-
պատ պայմաններուն մէջ իսկ:

Այո, կա՛ն տատանողները, յուսահատողները, յոգ-
նողները, ուսասպառները, հրաժարողները, իրենց պատ-
կանած կազմակերպութիւններէն դժգոհները, ուրիշ կազ-
մակերպութեան մը միացողները եւ ասոնց նմանները:

Բայց կա՛ն միւսները՝ հաւատարիմները, ու բա-
զում են անոնք: Ողջո՞յն անոնց:

— Անոնց, որոնք միշտ հաւատարիմ կը մնան
իրենց ժառանգութեան՝ ըլլալ այդ լեզու, մշակոյթ թէ
հայրենիք, նոյնիսկ երբ իրենց աւօրեային մէջ յաճախ
հեռու են լեզուէն ալ, մշակոյթէն ալ, հայրենիքէն ալ:
Ե՛ւ հաւատարիմ է՛ւ տէրը այդ ժառանգութեան:

Այո, անհաւատարիմներն ալ կան՝ անժառանգները,
ժառանգութեան դատարկ ճամպուկներով պտտողները,
իրենց պատմութենէն ու ծագումէն անտեղեակ, մայրենի
լեզուին չտիրապետող, գիրքէ ու մամուլէ հեռու, մշա-
կոյթէ ու մշակութամբէն զուրկ մարդիկ ալ՝ իրենց պէս
հազարաւորներու եւ միլիոնաւորներու նման:

Բայց կա՛ն միւսները՝ հաւատարիմները, ու բա-
զում են անոնք: Ողջո՞յն անոնց:

— Վերջապէս անոնց, որոնք կը մնան անդաւա-
